Հաստատվում եմ
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն
Ռ. Ղազարյան
17.03.2023թ.

ԿԱՐԾԻՔ

ՍԱՐԳԻՍ ՄԱՏԹԷՈՍԻ ՄԿՐՏՉԵԱՆԻ

ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԸ ԵՒ ԻՐԱՆԸ

(պատմութիւն, գաղափարախօսութիւն, քաղաքականութիւն)

Է.00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման ատենախոսության

մասին

Մասնագիտական խորհրդի հարգելի նախագահ և անդամներ,

հարգելի գործընկերներ

Սարգիս Մկրտչեանի հեղինակած ատենախոսությունը նվիրված է կարևոր գիտական և քաղաքական արդիականություն ունեցող թեմայի լուսաբանմանը: Պանթյուրքիզմի համակողմանի, սկզբնաղբյուրների վրա հիմնված հետազոտումը, անտարակույս, ժամանակակից արևելագիտության և հարակից գիտությունների կարևոր խնդիրներից է: Մասնավորապես, կարևոր է բացահայտել նրա քայքայիչ ազդեցության դրսևորումները այն երկրների վրա, որոնք խոչընդոտում են պանթյուրքիստական ծրագրերի իրականացմանը: Այդ Երկրների թվին է պատկանում նաև Իրանը:

Հենց սկզբից նշեմ, որ ատենախոսության թեմայով հեղինակի կողմից կատարած բարեխիղճ աշխատանքին ծանոթ եմ նրա՝ դեռևս տարիներ առաջ հրատարակած մենագրությունից, որը երկար ժամանակ իմ սեղանի գիրքն էր: Այդ նույն բարեխիղճ, գիտականորեն բծախնդիր մոտեցումը առկա է նաև այսօր

քննարկվող ատենախոսությունում: Այդ հանգամանքը արժանի է առանձնահատուկ դրվատանքի, քանի որ պանթյուրքիզմը շատ դեպքերում հանդես է գալիս քողարկված տեսքով և միայն տարիների մանրակրկիտ հետազոտական աշխատանքի արդյունքում էր հնարավոր եղել բացահայտել Իրանում և Իրանի դեմ Ադրբեջանից գործող պանթյուրքիստական կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունները և վեր հանել նրանց իրական նպատակները: Այդպիսի աշխատանքի արդյունք է սույն ատենախոսությունը:

Հարգելի բարեկամներ, ատենախոսի կատարած աշխատանքը կարևոր ներդրում է ոչ միայն «Պանթյուրքիզմը և Իրանը» գիտական թեմայի շրջանակներում, այլ նաև ընդհանրապես պանթյուրքիզմի՝ որպես շատ երկրների, այդ թվում, նաև Հայաստանի համար, վտանգ ներկայացնող երևույթի դրսևորումները ուսումնասիրելու և չեզոքացնելու տեսանկյունից: Այսպես, օրինակ, ատենախոսության երրորդ գլխի վերջին ենթագլուխը, որը վերնագրված է «Իրանում գործող պանթյուրքիստական կազմակերպությունների դերը Արցախյան երկրորդ պատերազմում», պարունակում է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության համար անմիջական անվտանգային նշանակություն ունեցող փաստացի նյութ: Այնպես որ, առանց վարանելու կարող եմ արձանագրել ատենախոսություն կարևոր գիտագործնական նշանակությունը:

Անհրաժեշտ չեմ համարում մանրամասն վերարտադրել ատենասության գլուխների և ենթագլուխների բովանդակությունը: Ուղղակի նշեմ, որ նրա կառուցվածքը միանգամայն տրամաբանական է և նպաստում է ատենախոսի կողմից ձևակերպված գիտական խնդիրների համակողմանի քննությանը, ինպես նաև եզրակացությունների հիմնավորմանը:

Ատենախոսությունը գրված է գիտական և վերլուծական պատշաճ մակարդակով: Երևում է, որ հեղինակը լավ է տիրապետում նյութին, կարողացել է համակարգված ձևով ներկայացնել պանթյուրքիստական կազմակերպությունների և նրանց անդամների մասին բազմաթիվ փաստեր, որոնց զգալի մասը արդյունք է քրտնաջան արխիվային պրպտումների բազմաթիվ սկզբնաղբյուրների հետ մանրակրկիտ աշխատանքի, և ծառայեցնել դրանք իր կողմից առաջ քաշած թեզերի հիմնավորմանը: Առանձնատուկ կարևոր նշանակություն ունեն հեղինակի կողմից գիտական շրջանառության մեջ դրվող Իրանի Ազգային արխիվի նյութերը:

Մեկ անգամ ևս գոհունակությամբ հատուկ ընդգծեմ, որ կատարված է մեծ աշխատանք: Արդյունքում ստացվել է մի այնպիսի աշխատություն, որը լուսաբանում է պանթյուրքիզմի հետ առնչվող և առանցքային նշանակություն ունեցող մի շարք խնդիրներ: Սույն ատենախոսությունը հետաքրքիր և ուսանելի է և մասնագետների, և համապատասխան պետական կառույցների ներկայացուցիչների համար՝ ինչպես մեզանում, այնպես էլ արտերկրում: Այն մեծապես կնպաստի թուրք - ադրբեջանական տանդեմի կողմից հարևան երկրների դեմ իրականացվող քայքայիչ պանթյուրքիստական գործունեության առանձնահատկությունները բացահատելուն և արժանի հակահարված տալուն:

Ատենախոսությունում տեղ են գտել որոշ բացթողումներ և անճշտություններ: Հիմնականում դրանք առկա են առաջին գլխում, որը վերնագրված է «Պանթյուրքիզմի ձևավորումը և Իրան թափանցելու առաջին փորձերը»: Բերեմ անճշտության միայն մեկ օրինակ. աշխատության 29-րդ էջում հեղինակը գրում է, թե պանթյուրքիստական ուղղվածության առաջին գործիչները հայտնվեցին Ռուսաստանում՝ 19-րդ դարի 80-ական թվականներին, անտեսելով այն փաստը, որ Օսմանյան կայսրության «նոր օսմանցիների» կազմակերպության առաջնորդներից Ալի Սուավին դեռևս ավելի քան մեկ տասնամյակ դրանից վաղ արդեն քարոզում էր պանթյուրքիստական գաղափարներ և հրատարակում էր գրքեր, որտեղ գովաբանում էր միասնական թյուրքական ցեղը, բնութագրելով այն որպես պատմության ամենահին և ամենահարուստ մշակույթ ունեցող ցեղ: Նրա կողմից դարերի ընթացքում ստեղծած պետությունները, ըստ Ալի Սուավիի, կարևոր դերակատարում են ունեցել պատմության մեջ, որը պետք է վերականգնել և այլն: Նմանատիպ պնդումները, իրենց էությամբ պանթյուրքիստական, բազմաթիվ են Ալի Սուավիի աշխատություններում: Նշեմ, մասնավորապես, հետևյալները. «Türk» («Թյուրք»), «Türklerin Mesai-i Zihniyeleri» («Թյուրքերի աշխատանքի մտածելակերպը»), «Hive Tarihi» («Խիվայի պատմություն»):

Այդ նույն գլխում առկա բացթողումներից է նաև այն հանգամանքը, որ ատենախոսը չի նշում, որ քեմալական շարժման առաջնորդ Մուսթաֆա Քեմալը նույնպես պանթյուրքիզմի ջատագովներից էր, ինչը պարզորոշ երևում է ժամանակին մեր կողմից հրատարակած և նրա գրչին պատկանող գաղտնի փաստաթղթերից:

Աշխատությունը զերծ չէ նաև տեսական բնույթի անճշտությունից: Կարծում եմ, գիտական վերլուծության մակարդակը բարձր պահելու տեսակետից արժեր հստակ նշել պանթյուրքիզմի և պանթուրանիզմի տարբերությունը. եթե առաջինի նպատակը թյուրքալեզու ժողովուրդների միասնությունն է՝ Թուրքիայի գերիշխանության ներքո, ապա նրա ավելի ծայրահեղական տարբերակի՝ պանթուրանիզմի նպատակը միասնական պետության՝ Թուրանի ստեղծումն է, իհարկե, նույնպես Թուրքիայի գերակայության պայմաններում:

Սակայն նշված բացթողումները չեն նսեմացնում ատենախոսի կողմից կատարած մեծ և օգտակար աշխատանքը:

Ելնելով վերոնշյալից, գտնում եմ, որ Սարգիս Մատթէոսի Մկրտչեանի «Պանթիւրքիզմը եւ Իրանը (պատմութիւն, գաղափարախօսութիւն, քաղաքականութիւն)» Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը, որը ներկայացված է պաշտպանության ԵՊՀ Պատմության ֆակուլտետում գործող ՀՀ ԲՈՀ-ի 069 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի սույն նիստում, բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին և նրա հեղինակը արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

17.03.2023 թ.